

**ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԱՄՆ-Ի ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1991-2000 ԹԹ.**

**ԱՐՄԻՆԵ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ**

Երևանի Պետական Համալսարան, ՀՀ, Երևան

Էլ. *huugit*՝ [alaverdyanarmine16@mail.com](mailto:alaverdyanarmine16@mail.com)

**DOI: 10.24234/scientific.v2i49.217**

**ԱՄՓՈՓՈՒՄ**

Խորհրդային Միության փլուզմամբ Հարավային Կովկասն ԱՄՆ-ի արտաքին քաղաքական օրակարգ, փաստացիորեն, մուտք գործեց որպես նոր սյուրեկտ, որի հետ Ամերիկայի Միացյալ Նահանգները նախկինում աշխատելու փորձառություն չունեին. չկային հստակ պատկերացումներ հարավկովկասյան պետությունների, նրանց կառավարման համակարգերի, գործող իշխանությունների ու քաղաքական ակնկալիքների վերաբերյալ. ԽՍՀՄ գոյության 70 տարիների ընթացքում պաշտոնական Վաշինգտոնի հիմնական թիրախը Մոսկվան էր, իսկ խորհրդային մյուս երկրների ու տարածաշրջանների նկատմամբ որդեգրած մոտեցումներն ու դիրքորոշումներն ուղղակիորեն պայմանավորվում էին Մոսկվա-Վաշինգտոն հարաբերություններով:

Մույն հոդվածում ներկայացվում է հետխորհրդային ժամանակաշրջանում Հարավային Կովկասում ԱՄՆ-ի տարածաշրջանային քաղաքականության ձևավորման հիմնական ուղղություններն ու թիրախները՝ իրավապայմանագրային հիմքերի երաշխավորման և նորանկախ երկրների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հետ հարաբերությունների հաստատման ու զարգացման համատեքստում: Հետազոտության շրջանակում օգտագործվել է պատմական, համեմատական ու վերլուծական մեթոդների համադրությունը, իրականացվել է մի շարք փաստաթղթերի՝ այդ թվում երկկողմ համաձայնագրերի ու պայմանագրերի կոնտենտ վերլուծություն:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել հետխորհրդային ժամանակաշրջանում ԱՄՆ-ի և հարավկովկասյան երեք երկրների միջև հարաբերությունների հաստատման և պաշտոնական Վաշինգտոնի տարածաշրջանային քաղաքականության ձևավորման համար հիմք հանդիսացող գործոնների ամբողջական համատեքստը՝ համահունչ ամերիկյան արտաքին քաղաքական մոտեցումներին ու դիրքորոշումներին:

**Զեռքբերումներ.** Հավատարիմ մնալով Խորհրդային Միության փլուզումից հետո ձևավորված արտաքին քաղաքական օրակարգին՝ պաշտոնական Վաշինգտոնը

հարավկովկասյան երեք երկրների հետ հարաբերություններ հաստատելու ճանապարհին հանդես եկավ համանման մոտեցումներով ու սկզբունքներով. ինչպես նորանկախ մյուս տարածաշրջանների և երկրների դեպքում, Հարավային Կովկասում ևս ԱՄՆ-ի հիմնական ջանքերն ուղղվեցին անվտանգային երաշխիքների ամրապնդմանը, ժողովրդավարական արժեքների տարածմանն ու շուկայական տնտեսությունների խթանմանը: Պաշտոնական Վաշինգտոնի որդեգրած համագործակցային մոդելը միաժամանակ արձագանքում էր տարածաշրջանի նորանկախ պետությունների հիմնարար խնդիրներին և արտացոլում ԱՄՆ-ի երկարաժամկետ ներգրավվածության տեսլականը՝ կառուցված իրավապայմանագրային հիմքերի, համաչափ մոտեցումների և փոխվստահության ձևավորման վրա:

*Քանալի բառեր*՝ Հարավային Կովկաս, տարածաշրջանային քաղաքականություն, Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Խորհրդային Միություն, նորանկախ երկրներ:

### **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Խորհրդային Միության փլուզումից հետո, երբ պաշտոնական Վաշինգտոնի արտաքին քաղաքական օրակարգը, հիմնականում ձևավորվում էր անվտանգային սպառնալիքների չեզոքացման, ժողովրդավարության հաստատմանն ու տնտեսական շահերի առաջնորդմանն առնչվող հարցերի միջակայքում, ԱՄՆ-ն որդեգրել էր նախկին միութենական երկրների ինքնիշխանությանն ու անկախությանը, հետխորհրդային տարածաշրջաններում ժողովրդավարական արժեքների տարածմանը, ինչպես նաև շուկայական տնտեսությունների խթանմանն աջակցելու սկզբունքը: Սակայն, թե՛ նախագահ Ջորջ Հ. Վ. Բուշի, թե՛ Բիլ Բլինթոնի վարչակազմերը, ազգային շահերի և առաջնային հետաքրքրությունների առերևույթ բացակայության պայմաններում, հետխորհրդային տարածաշրջանների՝ այդ թվում Հարավային Կովկասի նկատմամբ տարբերակված դիրքորոշում չունեին. ամերիկյան պատկերացումները նախկին ԽՍՀՄ երկրների, նրանց կարողությունների ու հնարավորությունների, քաղաքական կողմնորոշումների ու ակնկալիքների վերաբերյալ դեռևս գտնվում էին սաղմնային փուլում:

Այնուամենայնիվ, ակնհայտ էր, որ պաշտոնական Վաշինգտոնը պետք է համապատասխան աշխատանքներ մեկնարկեր նորահռչակ պետությունների հետ հարաբերությունների հաստատման համար, քանի որ վերջիններս այլևս միջազգային հարաբերությունների համակարգի լիիրավ անդամներ էին: Ուստի, անհրաժեշտ էր ստեղծել ամուր և կայուն հիմքեր երկկողմ և բազմակողմ կապերի հետագա զարգացման ու ընդլայնման համար՝ առաջին հերթին ապահովելով հետխորհրդային ժամանակաշրջանում ամերիկյան արտաքին քաղաքական, անվտանգային ու տնտեսական շահերին ու հետաքրքրություններին համապատասխան բարենպաստ միջավայր ու պայմաններ:

## **ԱՄՆ-ի ընկալումները Հարավային Կովկասի և հարավկովկասյան պետությունների վերաբերյալ ԽՍՀՄ փլուզումից հետո**

Ամերիկայի Միացյալ Նահանգների արտաքին քաղաքական առաջնահերթությունները, կապերն ու առնչությունները և դրանց շուրջ զարգացումները մշտապես միջազգային հարաբերությունների գիտահետազոտական հանրույթի ուշադրության առանցքում են: Չնայած ԱՄՆ-ն տարածքով և բնակչության թվով զիջում է մի շարք պետությունների, այնուամենայնիվ, այս երկիրը միջազգային հարաբերությունների համակարգի այն յուրօրինակ այուբեկտներից է, որը գործում է ինչպես աշխարհագրական, այնպես էլ մարդկային և ֆինանսատնտեսական ահռելի ռեսուրսային պաշարի հովանու ներքո, ուստի զարմանալի չէ, որ ամերիկյան արտաքին քաղաքականության մշակողները Սպիտակ տան ներկայացուցիչներին միջազգային ասպարեզում հաճախ են դիտարկում «թելադրողի» և «հարցեր լուծողի» դիրքերում: Այսօրինակ թեզերն արածարծվում ու առաջ են մղվում բազմաթիվ գիտական աղբյուրներում ու աշխատություններում. վերոնշյալ մտքերն ամփոփ կերպով շարադրված են նաև Ֆրեյզեր Քեմերոնի «ԱՄՆ արտաքին քաղաքականությունը Սառը պատերազմի ավարտից հետո» աշխատությունում, որտեղ հեղինակը ԱՄՆ-ի մասին գրում է՝ «ԱՄՆ-ն իր յուրահատուկ դիրք է զբաղեցնում համաշխարհային գործերում: Պատմության ընթացքում երբեք որևէ երկիր այսքան մեծապես չի գերակշռել միջազգային դաշտում, ինչպես դա անում է ԱՄՆ-ն այսօր: Անկախ ցուցանիշից՝ ռազմական հզորություն, տնտեսական ուժ, քաղաքական ազդեցություն, տեխնոլոգիական առաջատարություն, թե մշակութային մոդել, ԱՄՆ-ն հանդես է գալիս իր ուրույն դիրքերից (Cameron, 2005, p. 15): Անշուշտ, պաշտոնական Վաշինգտոնը միջազգային ասպարեզում և համաշխարհային գործընթացներում ունի իր առանձնահատուկ տեղը, ինչպես տարաբնույթ իրադարձություններին անմիջականորեն մասնակցություն, այնպես անուղղակի ներգրավածություն ունենալու համատեքստում, և այս հանգամանքը պայամանավորում է ժամանակ առ ժամանակ արտաքին քաղաքական օրակարգում փոփոխություններ անելու, նոր հարաբերություններ ու համագործակցային կապեր հաստատելու անհրաժեշտությունը, այնպես, ինչպես դա տեղի ունեցավ Խորհրդային Միության փլուզումից հետո:

1993 թվականի հունվարի 1-ին ընդունված ԱՄՆ ազգային անվտանգության նոր ռազմավարությունը եկավ ներկայացնելու «նոր աշխարհում» պաշտոնական Վաշինգտոնի համար ստեղծված հնարավորությունների, ի հայտ եկած խնդիրների ու մարտահրավերների, առաջիկա անելիքների ու նախաձեռնությունների հիմնական

շրջանակը՝ խոսելով պետության ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահերի ու հետաքրքրությունների տեսանկյունից: Ինչ վերաբերում է նախկին ԽՍՀՄ երկրներին, ապա փաստաթղթի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ ԱՄՆ-ն վերջիններիս հետ համագործակցությունը պատկերացնում էր հետևյալ մի քանի ուղղություններով՝

- ժողովրդավարության տարածում և քաղաքական համակարգի բարեփոխումներ,
- շուկայական տնտեսությունների ձևավորում,
- անվտանգային երաշխիքներ և հակաահաբեկչական պայքար (National Security Strategy of the United States, 1993):

Անխոս, թե՛ այս, թե՛ մի շարք այլ կետերում ԽՍՀՄ երկրները պաշտոնական Վաշինգտոնի կողմից դիտարկվում էին որպես մեկ միասնական օբյեկտ: Սակայն, հարկ է նշել, որ եթե փաստաթղթերի մակարդակում Սպիտակ տանը հաջողվում էր այս (նույնական) մոտեցումը կիրառել, ապա հարաբերությունների հաստատման ու ձևավորման փուլերում ԱՄՆ-ն «ստիպված» էր տարաբնույթ մեթոդներ ու գործիքակազմեր մշակել, քանի որ նորանկախ երկրները տարբերվում էին ինչպես իրենց արտաքին ու ներքին խնդիրներով, այնպես էլ հնարավորություններով ու կարողություններով. այս համատեքստում Հարավային Կովկասը ևս բացառություն չէր՝ թե՛ Հայաստանը, թե՛ Վրաստանը և թե՛ Ադրբեջանը ԱՄՆ-ի հետ անցել են հարաբերությունների ձևավորման ու զարգացման ուրույն ճանապահով. ինչպես գրում է պատմաբան Ջեյմս Նիքսին «Հարավային Կովկաս. դրամա երեք փուլերով» աշխատությունում «...Երեք երկրներն զգալիորեն տարբերվում են՝ թե՛ ներքին իրավիճակով, թե՛ աշխարհաքաղաքական ուղղվածությամբ: Նրանք հին են՝ որպես ժողովուրդներ, բայց նոր՝ որպես ինքնակառավարվող պետություններ, և Խորհրդային Միության փլուզումից ու 1991 թվականին անկախություն ձեռք բերելուց հետո յուրաքանչյուրն ընտրել է իր առանձին ուղին» (Nixey, 2010, p. 125): Այսպիսով, երեք տարբեր պետություններ, հարաբերությունների ու շահերի երեք տարբեր շրջանակներ, որտեղ առանքայինն անշուշտ յուրաքանչյուր կողմի համար հարաբերությունների ու կապերի ձևավորման և դրանց հետագա զարգացման երկուստեք ընկալելի և շահավետ ճանապարհը գտնելն էր:

Ամերիկյան պատմության դոցենտ, գիտնական Ջուլիեն Չարիֆյանն իր «ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը 1990-ականներին և 2000-ականներին և Հարավային Կովկասի դեպքը (Հայաստան, Ադրբեջան, Վրաստան)» աշխատությունում, անդրադառնալով ԱՄՆ-Հարավային Կովկաս հարաբերություններին, ինչպես նաև ամերիկյան տարածաշրջանային քաղաքականությանը, հստակ նշում է, որ թեև ԱՄՆ-ի որոշ պաշտոնյաներ Հարավային Կովկասը ներկայացնում էին, որպես առանցքային տարածաշրջան, այն պաշտոնական Վաշինգտոնի առաջնահերթություններից չէր, և

այստեղ վերջինիս կենսական շահերը վտանգված չէին: Սակայն, ասվածը չի նշանակում, որ Հարավային Կովկասն ամենևին դեր չէր խաղում համաշխարհային քաղաքականության մեջ (Zarifian, 2021, p. 4): Նշյալ միտքը տրամաբանորեն վերահաստատվում է Օրհան Գաֆարլիի, Արևիկ Անապիոյանի, Խաթունա Չապիխաձեի, Մեհմեթ Փաթիի Օզթարսուի «Գլոբալ և միջազգային խաղացողների դերը Հարավային Կովկասում» վերտառությամբ հոդվածում, որտեղ հեղինակները, առաջնորդվելով նեոռեալիստական մոտեցմամբ, փաստում են, որ թեև հարավկովկասյան երկրներում պաշտոնական Վաշինգտոնը չուներ տեսանելի շահեր, այնուամենայնիվ, որպես երեք տերությունների՝ Ռուսաստանի, Թուրքիայի և Իրանի միջև գտնվող բուֆեռային գոտի, համաշխարհային շախմատային խաղատախտակի վրա տարածաշրջանն ԱՄՆ-ի համար հանդիսանում էր կարևոր խաղաքար (Gafarlı & Anapiosyan & Chapichadze & Öztarsu, 2016, p. 4) : Ուստի, որքան էլ որ Սպիտակ տան դեկավարների համար Հարավային Կովկասում հատուկ քաղաքականության մշակմանն առնչվող գործընթացներն առաջնային կարևորություն չունեին, այսուհանդերձ, հարավկովկասյան երկրների հետ հարաբերությունների հաստատումն ու տարածաշրջանային ռազմավարության կիրարկումն այլընտրանք ունենալ չէին կարող:

Հարավային Կովկասում ԱՄՆ-ի ակտիվացումն ու տարածաշրջանային ռազմավարության մշակման և գործարկման մեկնարկը ընդունված է անմիջականորեն կապել 1990-ականների կեսերին Կասպից ծովի նավթային պաշարների հայտնաբերման հետ իրադարձություն, որը տարածաշրջանի վրա սևեռեց ոչ միայն պաշտոնական Վաշինգտոնի, այլ նաև միջազգային այլ դերակատարների ուշադրությունը: Այնուամենայնիվ, ԱՄՆ-ի հարավկովկասյան քաղաքականության վրա էներգետիկ գործոնի ունեցած ազդեցության մասին խոսելուց զատ, պետք է չմոռանալ նաև Հարավային Կովկասի աշխարհագրական դիրքի և ըստ այդմ ընձեռած աշխարհառազմավարական հնարավորությունների կարևորության մասին: Այս համատեքստում բավական է միայն նշել, որ Հարավային Կովկասը, տարածվելով Սև և Կասպից ծովերի միջև ու զբաղեցնելով կենտրոնական դիրք Եվրասիայում, անմիջականորեն սահմանակցում է Ռուսաստանի Դաշնությանը, Իրանի Իսլամական Հանրապետությանը և Թուրքիային: Հարավային Կովկասի անմիջական հարևանը հյուսիսում Ռուսաստանն էր՝ երկիր, որի հետ պաշտոնական Վաշինգտոնի հարաբերությունները հետխորհրդային ժամանակաշրջանում շարունակում էին զարգանալ հակասությունների ու տարաձայնությունների խաչմերուկում՝ չնայած երկու պետությունները կապված էին միջուկային զենքի տարածմանը, սպառազինությունների համակարգերի քանակներին, բնութագրերին, վերահսկմանն ու այլ սահմանափակումներին վերաբերող մի շարք պայմանագրերով: Ռուսաստանը՝ որպես նախկին ԽՍՀՄ առաջնորդ, որը հետխորհրդային երկրների հետ կիսում էր

տասնամյակների պատմություն, ակնհայտ է, որ փորձելու էր, ամրապնդելով տարածաշրջանային դիրքերն ու ընդլայնելով համագործակցությունների շրջանակը՝ պահպանել խորհրդային ժամանակաշրջանի ազդեցության լծակները. այս համատեքստում, բնականաբար, Սպիտակ տան ներկայացուցիչների համար նորանկախ պետությունների հետ գործակցելը դառնում էր առավել խրթին և խոչընդոտներով լի գործընթաց՝ անհրաժեշտ էր ծանոթանալ նրանց ներքին և արտաքին խնդիրներին, բացահայտել ռազմաքաղաքական ու սոցիալտնտեսական կարիքները, վեր հանել քաղաքական նախասիրություններն ու ակնկալիքները՝ փորձելով ձեռք բերել վստահություն՝ ստեղծելով ամուր և փոխշահավետ կապեր: Տարածաշրջանի հարավում Թուրքիան էր՝ ՆԱՏՕ-ի դաշնակիցն ու Մերձավոր Արևելքի առանցքային խաղացողներից մեկը, որը պաշտոնական Վաշինգտոնի համար ձեռք էր բերում առաջնային նշանակության գործընկերոջ դեր՝ հատկապես իսլամական աշխարհի հետ հարաբերությունների ձևավորման գործընթացում: ԱՄՆ-ի կողմից Թուրքիան կարևորվում էր նաև Իրան-Թուրքիա ընդհանուր սահմանի առկայությամբ՝ պայմանավորված Իրանի հետ ունեցած վատթար հարաբերություններով: Բացի այս, պետք է չմոռանալ նաև Թուրքիայի էներգետիկ «կամուրջ» դառանալու հավակնությունների մասին, ինչը ենթադրում էր, որ այն պետք է հանդիսանար Կասպից ծովի, Մերձավոր Արևելքի և Կենտրոնական Ասիայի նավթի և բնական գազի պաշարները կապող օղակ՝ ստեղծելով նպաստավոր պայմաններ էներգետիկ ոլորտում Անկարա-Վաշինգտոն փոխշահավետ համագործակցության համար:

Այսպիսով, ԻՍՀՄ փլուզումից հետո ԱՄՆ-ի քաղաքական ընկալումներում Հարավային Կովկասը դիտարկվում էր որպես հետխորհրդային տարածքի բաղկացուցիչ մաս՝ առանց էական տարանջատումների: Սակայն տարածաշրջանի աշխարհաքաղաքական դիրքը, հարևան տերությունների՝ ՌԴ-ի, Թուրքիայի ու Իրանի առկայությունը, ինչպես նաև մի շարք այլ գործոններ հանգեցնում էին նրան, որ պաշտոնական Վաշինգտոնն այստեղ սկսի ձևավորել առավել դիտարկելի, նպատակային ու շահերի վրա հիմնված քաղաքականություն: Այնուամենայնիվ, ինչպես 1990-ականների ազգային անվտանգության ռազմավարությունները, այնպես էլ գործնական մոտեցումները վկայում են, որ Խորհրդային Միության փլուզումից հետո՝ սկզբնական շրջանում, ԱՄՆ-ի համար երեք երկրների հետ հարաբերությունների հիմքում դրված էին գրեթե նույնական նպատակներ՝ ժողովրդավարության տարածում, անվտանգային սպառնալիքների նվազեցում, տնտեսության ազատականացում՝ այնպես, ինչպես նախկին ԻՍՀՄ մյուս տարածաշրջանների ու պետությունների դեպքում:

**Անվտանգային գործոնի ազդեցությունը ԱՄՆ-Հարավային Կովկաս հարաբերությունների վրա**

Խորհրդային Միության փլուզումը, միջազգային հարաբերությունների համակարգում քաղաքական արմատական փոփոխությունների հանգեցնելուց զատ, էական ազդեցություն ունեցավ նաև գլոբալ անվտանգային համակարգի վրա՝ զանգվածային ոչնչացման զենքեր, անդրազգային հանցագործություններ, պաշտպանական կարողությունների և ինստիտուտների բացակայություն, խնդիրներ որոնցից անմասն չէր կարող մնալ որևէ պետություն կամ տարածաշրջան: Հետխորհրդային ժամանակաշրջանում պաշտոնական Վաշինգտոնի համար նշյալ սպառնալիքների հնարավոր հետևանքներն ու վտանգները ավելի քան կանխատեսելի էին, ուստի զարմանալի չէ, որ նորանկախ երկրների հետ հարաբերությունների ձևավորման սկզբնական փուլերում արդեն իսկ ԱՄՆ-ն հակված էր աջակցելու վերջիններիս անվտանգային-պաշտպանական կարողությունների ու ռեսուրսների զարգացմանը:

Վաշինգտոնում դեռ ԽՍՀՄ փլուզումից առաջ լիարժեք գիտակցում էին ապագա աշխարհաքաղաքական զարգացումներից բխող մարտահրավերների խորությունը և դրանց հնարավոր ազդեցությունները միջազգային անվտանգային համակարգի վրա: Այդ իսկ պատճառով ԱՄՆ-ը նախաձեռնել էր մի շարք քաղաքական և դիվանագիտական քայլեր՝ նպատակ ունենալով կանխել զանգվածային ոչնչացման զենքի տարածումը, ռազմական էսկալացիան և անկայունության խորացումը՝ ինչպես տարածաշրջանային, այնպես էլ գլոբալ մակարդակներում:

Հարկ է նշել, որ դեռևս 1991 թվականի հուլիսի 31-ին Մոսկվայում ԱՄՆ նախագահ Ջորջ Հ. Վ. Բուշը և ԽՍՀՄ նախագահ Միխայիլ Գորբաչովը ստորագրել էին «Ռազմավարական սպառազինությունների կրճատման մասին» պայմանագիրը (Strategic Arms Reduction Treaty, START I), որով կողմերը պարտավորվել էին սահմանափակել տեղակայված ռազմավարական մարտագլխիկների թիվը մինչև 6000, իսկ կրող միջոցների՝ միջմայրցամաքային հրթիռների և ռմբակոծիչների քանակը՝ մինչև 1600 (Powaski, 2019, p. 42): Այս գործընթացի տրամաբանական շարունակությունը դարձավ 1993 թվականի հունվարի 3-ին Ջորջ Հ. Վ. Բուշի և Բորիս Ելցինի միջև ստորագրված START II պայմանագիրը, որն ավելի խորը և ընդգրկուն ձևով վերահաստատեց առաջին համաձայնագրի նպատակները: ԱՄՆ Սենատը վավերացրեց այն 1996 թվականին, իսկ Ռուսաստանի Պետդոման և Դաշնային խորհուրդը՝ 2000 թվականին (Nuclear Threat Initiative, n.d.): Կարևոր է ընդգծել, որ START II-ի նպատակը ոչ թե START I-ի փոխարինումն էր, այլ դրա ամրապնդումը և ռազմավարական զենքերի վերահսկման համակարգի կատարելագործումը:

ԱՄՆ-ի նման նախաձեռնությունները նպատակ ունեին ամրապնդել գլոբալ անվտանգությունը, սակայն դրանց արդյունավետությունն անխուսափելիորեն կախված էր նաև նորանկախ պետությունների ներսում անվտանգային ենթակառուցվածքների

գարգացման մակարդակից: Հարավային Կովկասի երկրները, ինչպես մյուս նախկին խորհրդային հանրապետությունները, անկախացումից հետո հայտնվել էին բարդ քաղաքական, տնտեսական և ինստիտուցիոնալ անցման փուլում: Դրանց պետական կառավարման համակարգերն ու պաշտպանական կարողությունները դեռևս ձևավորման փուլում էին՝ դարձնելով տարածաշրջանը առավել խոցելի ներքին անկայունության, տարածաշրջանային հակամարտությունների և արտաքին միջամտությունների նկատմամբ:

Այս համատեքստում ԱՄՆ-ն, գնահատելով Հարավային Կովկասում առկա մարտահրավերների լրջությունը, հակված էր աջակցել հարավկովկասյան երկրների անվտանգային կարողությունների ձևավորմանը և ամրապնդմանը, որը ոչ միայն ուղղված էր հակազդելու ռազմական սպառնալիքներին, այլ, անշուշտ, նպատակ ուներ նաև ինտեգրել տարածաշրջանը արևմտյան անվտանգային համակարգին:

Երբ 1991 թվականի դեկտեմբերի 25-ին ԱՄՆ նախագահ Ջորջ Հ. Վ. Բուշը հայտարարեց Հայաստանի Հանրապետության անկախությունը ճանաչելու իր որոշման մասին, կողմերի միջև մեկնարկեց հարաբերությունների ձևավորման գործընթացը, իսկ 1992 թվականի հունվարի 9-ին հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ: Այդ օրվանից մինչ օրս Հայաստանն ու ԱՄՆ-ն շարունակում են մեկտեղել ջանքերն ու ռեսուրսները՝ աշխատելով ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման, կայուն և ներառական տնտեսության ձևավորման, տարածաշրջանում խաղաղության հաստատման և, իհարկե, անվտանգային սպառնալիքների չեզոքացման ուղղություններով:

Թեև ժամանակի ընթացքում անվտանգային սպառնալիքների բնույթը և ծավալները ենթարկվել են փոփոխությունների, այնուամենայնիվ, անվտանգային կայունության ապահովման հարցը մշտապես պահպանել է իր օրակարգային կարևորությունը հայ-ամերիկյան հարաբերություններում: ԱՄՆ-ը կառավարությունը մշտապես աջակցություն է տրամադրել հարավկովկասյան երկրներին՝ այդ թվում Հայաստանին, գենքի չտարածման, արտահանման վերահսկողության, սահմանային, հակաահաբեկչական և մի շարք այլ անվտանգային հարցերի լուծման նպատակով: Կարևոր է նշել, որ այս գործողություններն իրենց իրավական ամրագրումն են ստացել պետական և միջպետական մի շարք փաստաթղթերում: Այս համատեքստում հատկապես հիշատկման է արժանի 2000 թվականի հոկտեմբերին ստորագրված «Անվտանգության աջակցության մասին» օրենքը, որն ԱՄՆ-ի կառավարությանը թույլ էր տալիս ընդլայնված աջակցություն ցուցաբերել հարավկովկասյան երկրներին՝ սահմանելով համագործակցության և փոխգործակցության հստակ ուղղություններ և շրջանակ (Nichol & Kim, 2001, p. 16):

Անվտանգային հարցերի շուրջ համագործակցությունն էլ ավելի սերտացնելու և ընդլայնելու նպատակն էր հետապնդում կողմերի միջև 2000 թվականի հուլիսի 24-ին

ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև զանգվածային ոչնչացման զենքի տարածմանը հակազդելու բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը: Համաձայն սույն փաստաթղթի՝ կողմերի ջանքերը ուղղվելու էին միջուկային զենքի, ինչպես նաև այդպիսի զենքի հետ առնչվող նյութերի, տեխնոլոգիաների տարածման հակազդմանը, միջուկային, կենսաբանական և քիմիական զենքերի և դրանց վերաբերյալ նյութերի չարտոնված փոխանցման ու տարանցման կանխմանը: Ուշադրության է արժանի համաձայնագրի հոդված 1-ը, որտեղ հստակ նշվում է՝ «...ԱՄՆ-ի կառավարությունը ՀՀ կառավարությանը, վերջինիս հայտերի հիման վրա» մշտական կամ ժամանակավոր օգտագործման համար կտրամադրի սարքավորումներ, նյութեր, տեխնոլոգիաներ, ինչպես նաև կմատուցի համապատասխան ծառայություններ և կիրականցի անձնակազմի համապատասխան ուսուցում» (U.S. Department of State, 2002): Այսպիսով ԱՄՆ կառավարությունն իր պատրաստակամություն էր հայտնում աջակցելու ՀՀ կառավարությանը՝ նպաստելով անվտանգության ոլորտում պետության կարողությունների զարգացմանն ու մարդկային կապիտալի առաջխաղացմանը:

Հայ-ամերիկյան հարաբերությունների և հատկապես անվտանգային հարցերի շուրջ համագործակցության մասին խոսելիս արդարացիորեն անհրաժեշտություն է առաջանում նաև հիշատակել Հյուսիսատլանտյան դաշինքի (ՆԱՏՕ) հետ Հայաստանի Հանրապետության ունեցած հարաբերությունների մասին՝ հաշվի առնելով, որ ԱՄՆ-ն հանդիսանում է այս կառույցի հիմնադիր անդամ և պաշտոնական Վաշինգտոնի կողմից իրականացվող բազմաթիվ միջոցառումներ ու ծրագրեր իրականացվել ու շարունակում են իրականացվել Կառույցի ակտիվ ներգրավմամբ՝ որպես արևմտյան անվտանգային համակարգի անկյունաքարային մաս:

ՆԱՏՕ-ի հետ Հայաստանի հարաբերությունների հիմքերը դրվել են դեռևս 1992 թվականին, երբ Հայաստանը դարձավ Հյուսիսատլանտյան համագործակցության խորհրդի (NACC) անդամ, սակայն այս կապերն առավել սերտ և առարկայական դարձան, երբ 1994 թվականին երկիրը միացավ ՆԱՏՕ-ի Գործընկերություն հանուն ծաղաղության ծրագրին, որը ենթադրում էր համագործակցություն տարբեր ձևաչափերով՝ բազմակողմ գործողություններ՝ հումանիտար օգնություն, խաղաղապահ առաքելություն, ճգնաժամային կառավարում, փոխգործակցության բարելավում, ինչպես նաև խորհրդակցություններ ՆԱՏՕ-ի հետ՝ անվտանգային սպառնալիքների դեպքում: Հարկ է նշել, որ ծրագիրը ԱՄՆ-ի ակտիվ նախաձեռնողականության արդյունքն էր և Հայաստանից զատ ներառում էր ևս 26 պետության (U.S. Department of State, 2001): ՀՀ-ՆԱՏՕ հարաբերություններում կարևոր էր նաև 1993 թվականին Հայաստանի ներգրավվումը ՆԱՏՕ-ի Գիտություն հանուն խաղաղության և անվտանգության ծրագրին (Science for

Peace and Security (SPS) Programme), սույն փաստաթղթի շրջանակում կողմերի միջև համագործակցության առաջնային ուղղությունները ներառում են՝

- պաշտպանություն քիմիական, կենսաբանական, ճառագայթային և միջուկային (CBRN) նյութերից,
- անվտանգային ոլորտի առաջադեմ տեխնոլոգիաներ,
- ահաբեկչության դեմ պայքար և
- միջավայրային անվտանգություն (North Atlantic Treaty Organization, 2024):

Այսպիսով, հետխորհրդային ժամանակաշրջանում հայ-ամերիկյան անվտանգային համագործակցությունը ձևավորվեց որպես կարողությունների զարգացման և սպառնալիքներին համատեղ հակազդելու միջոց՝ տեսանելիորեն զուգակցվելով նաև Հյուսիսատլանտյան դաշինքի հետ հարաբերությունների սերտացմամբ՝ որպես ավելի լայն արևմտյան անվտանգության համակարգի բաղադրիչ:

Անցում կատարելով անվտանգային ոլորտում ԱՄՆ-Վրաստան համագործակցությանը՝ պետք է առաջին հերթին հստակ ընդգծել, որ հետխորհրդային ժամանակաշրջանում կողմերի հարաբերությունների ձևավորման ու զարգացման ընթացքը զուգորդվել է նորանկախ երկրի առջև ծառայած քաղաքական տարաբնույթ խնդիրների՝ այդ թվում Աբխազիայի և Հարավային Օսեթիայի կոնֆլիկտների շարունակական առկայությամբ, որի արդյունքում պաշտոնական Վաշինգտոնի հետ կապերի սերտացումն ու ստացված աջակցությունն առանձնակի կարևորություն են ձեռք բերել պաշտոնական Թբիլիսի համար: Ինչպես Հայաստանի, այնպես էլ Վրաստանի դեպքում՝ ԱՄՆ-ն սկզբից և եթ լծվեց նորանկախ երկրի անվտանգային-պաշտպանական կարողությունների ու ռեսուրսների ընդլայնման ու ամրապնդմանը, ինչն անշուշտ միտված էր կայուն խաղաղության և անվտանգության ապահովմանը:

1997 թվականի հուլիսի 17-ին Վաշինգտոնում ԱՄՆ-ի և Վրաստանի կառավարությունների միջև ստորագրվեց «Չանգվածային ոչնչացման զենքերի տարածման կանխարգելման ոլորտում համագործակցության և պաշտպանության ու ռազմական հարաբերությունների խթանման մասին» համաձայնագիրը, որով կողմերը պայմանավորվում էին՝

- կանխել Վրաստանից զանգվածային ոչնչացման զենքերի և այդ զենքերի հետ կապված տեխնոլոգիաների, նյութերի տարածումը,
- կանխել միջուկային, կենսաբանական կամ քիմիական զենքի և հարակից նյութերի չարտոնված տեղափոխումն ու փոխադրումը Վրաստանից,
- նպաստել կողմերի միջև պաշտպանական և ռազմական շփումներին ու համագործակցային գործողությունների իրականացմանը:

Մույն փաստաթուղթն իրավական երաշխիքներ էր ապահովում ԱՄՆ-ի կառավարության կողմից Վրաստանի կառավարությանը տրամադրվող օգնության համար, որը ենթադրում էր համապատասխան սարքավորումների ու նյութերի տրամադրում կամ փոխառություն, աշխատակիցների տեսական և գործնական դասընթացների իրականացում, առանձին դեպքերում փորձագիտական աջակցություն, (U.S. Department of State, 1997): Փաստացիորեն ԱՄՆ-ն և Վրաստանը հայտնում էին իրենց հանձնառությունն ինչպես պաշտպանական և ռազմական շփումների խորացման, այնպես էլ զսպող, կանրագելիչ միջոցառումների իրականացման համատեքստում՝ հանգամանք, որը որպես նորանկախ պետություն՝ Վրաստանի կառավարությանը տալիս էր հավելյալ գործիքներ անվտանգային երաշխիքների ամրապնդման ու զսպման մեխանիզմների լավարկման համար:

Անվտանգություն, կայուն խաղաղություն, աջակցություն և մի շարք այլ կարևոր հարցեր, որոնք ներառված էին Վրաստանի և ՆԱՏՕ-ի ընդհանուր օրակարգում, այստեղ, անշուշտ, հատկանշական է պաշտոնական Վաշինգտոնի դերը՝ ինչպես կողմերի միջև համագործակցային կապերի հաստատման, այնպես էլ դրանց զարգացման խրախուսման համատեքստում: Ինչպես նշվում է կառույցի պաշտոնական կայքէջում՝ Վրաստանը ՆԱՏՕ-ի ամենամոտ գործընկերներից է: 1994 թվականին Վրաստանը միացավ ՆԱՏՕ-ի Խաղաղություն հանուն գործընկերության ծրագրին, որ շրջանակում, ի թիվս մի շարք այլ պետությունների, սկսեց համագործակցել Դաշինիքի հետ թե՛ հումանիտար, թե՛ ճգնաժամերի կառավարման և թե՛ սպառնալիքների չեզոքացման ու նվազեցման հարցերի շուրջ: Նույն թվականին երկիրը միացավ նաև ՆԱՏՕ-ի «Գիտություն հանուն խաղաղության ու անվտանգության ծրագրին», որը սահմանում էր կողմերի միջև համագործակցության բազմաթիվ ուղղություններ, որոնց շարքում առաջնային էին՝ բնապահպանական և էներգետիկ անվտանգությունը, ահաբեկչության դեմ պայքարը, նորարարական տեխնոլոգիաները (NATO, 2024):

Այսպիսով, հետխորհրդային շրջանում Վրաստանի և ԱՄՆ-ի միջև ձևավորված անվտանգային համագործակցությունը ոչ միայն ուղղված էր երկրի ներքին կայունության ամրապնդմանը և ռազմական կարողությունների զարգացմանը, այլև ծառայեց որպես հիմք՝ Վրաստանի՝ եվրատլանտյան կառույցների, հատկապես ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունների սերտացման համար: Կարելի է ասել որ այս փոխհարաբերություններում ԱՄՆ-ն հանդես էր գալիս ոչ միայն որպես անվտանգային ոլորտում հիմնական աջակից, այլ նաև որպես քաղաքական առանցքային գործընկեր, որը տեսանելի ջանքեր էր գործադրում Վրաստանի անվտանգային համակարգի վերակառուցման համար:

Անցում կատարելով անվտանգային հարցերի շուրջ ԱՄՆ-ի և Ադրբեջանի միջև ձևավորված համագործակցությանը՝ կրկին պետք է անդրադարձ կատարենք ՆԱՏՕ-ի դերակատարմանը: 1994 թվականին Ադրբեջանը, հարավկովկասյան մյուս երկրների պես, միացավ ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին, որի արդյունքում պաշտոնական Բաքուն կարողացավ առավել մեծ ակտիվություն ցուցաբերել Եվրոատլանտյան անվտանգությանն ուղղված գործընթացներին՝ աջակցելով ՆԱՏՕ-ի գլխավորած խաղաղության աջակցության գործողություններին (NATO, 2024): Շարունակելով ՆԱՏՕ-ի հետ համագործակցության ընդլայնումը՝ 1997 թվականին Ադրբեջանը միացավ PfP պլանավորման և վերանայման գործընթացին (PfP Planning and Review Process (PARP)): Այս մեխանիզմի նպատակն էր աջակցել և ուղղորդել գործընկերակներին անվտանգության, պաշտպանության և ռազմական փոխակերպման ու արդիականացման ջանքերում: Ադրբեջանի մասնակցությունը Ծրագրին ՆԱՏՕ-ին թույլ կտար աջակցել վերջինիս պաշտպանական հաստատությունների բարեփոխման ու անվտանգային հարցերով զբաղվող անձնակազմի կարողությունների զարգացման, միջազգային չափանիշների համապատասխան ստորաբաժանումների ձևավորման, միջազգային խաղաղության հաստատման գործողությունների մասնակցելու համար անհրաժեշտ ուժերի կազմավորման ու պատրաստման և մի շարք այլ առանցքային կարևորության գործընթացներում (NATO, 2024): Անվտանգային հարցերում ՆԱՏՕ-ի հետ համագործակցությունն, անշուշտ, էական նշանակություն պետք է ունենար Ադրբեջանի համար, քանի որ Խորհրդային Միության փլուզումից հետո գրեթե զրոյական կետից պետք է սկսվեին ռազմական և պաշտպանական մեխանիզմների մշակման, ինստիտուտների ներդրման, անձնակազմի հավաքագրման, կրթման ու վերակրթման գործընթացները:

Ինչ վերաբերում է պաշտոնական Բաքվի և պաշտոնական Վաշինգտոնի միջև անվտանգային-պաշտպանական ոլորտում ձևավորված ուղիղ համագործակցությանը, սպա այս համատեքստում հիշատակման է արժանի կողմերի միջև 1999 թվականի սեպտեմբերի 28-ին Վաշինգտոնում ստորագրված «Չանգվածային ոչնչացման զենքերի տարածման դեմ պայքարի և պաշտպանության ոլորտում համագործակցության վերաբերյալ» համաձայնագիրը: Փաստաթղթի հիմնական նպատակն էր ընդլայնել երկկողմ համագործակցությունը զանգվածային ոչնչացման զենքի տարածման կանխարգելման, անվտանգային երաշխիքների ամրապնդման ու պաշտպանական կարողությունների բարելավման ուղղություններով: Համաձայնագրում սահմանված հիմնական նպատակների ու համագործակցության ուղղությունների շրջանակում փաստացիորեն Ադրբեջանի կառավարության խնդրանքով (request) ԱՄՆ-ի կառավարությունը աջակցելու էր վերջինիս պաշտպանական կարողությունների ընդլայնմանը, կողմերի միջև համագործակցությունը ներառելու էր նաև հետախուզական տվյալների փոխանակում, համատեղ

գործողություններ և տեխնիկական աջակցություն հակազդելու զանգվածային ոչնչացման զենքերի տարածմանը (U.S. Department of State n.d.):

Այսպիսով, ԱՄՆ-ի և Ադրբեջանի միջև անվտանգային համագործակցությունը սկզբունքորեն ձևավորվեց գործնական շահերի փոխհամաձայնության հիման վրա՝ ներառելով հատկապես զանգվածային ոչնչացման զենքերի տարածման կանխարգելումը, ռազմական կարողությունների ձևավորումն ու մասնագիտական ներուժի զարգացումը: ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի հետ համագործակցությունը հետխորհրդային շրջանում հնարավորություն էր տալու Ադրբեջանին ոչ միայն վերակազմավորել իր պաշտպանական ինստիտուտներն ու բարձրացնել ազգային անվտանգության մակարդակը, այլ նաև ինտեգրվել եվրատլանտյան անվտանգային օրակարգերին:

Փաստացիորեն ԻՍԱՀՄ փլուզումից հետո ԱՄՆ-ի անվտանգային համագործակցությունը Հարավային Կովկասի երեք երկրների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հետ, հետապնդում էր հստակ նպատակ՝ անվտանգային սպառնալիքների նվազեցում և դրանց դեմ հակազդում, պաշտպանական կարողությունների ընդլայնում և ամրապնդում՝ համահունչ հետխորհրդային ժամանակաշրջանում ձևավորված բարդ աշխարհաքաղաքական իրավիճակին: ԱՄՆ-ի մոտեցումը բոլոր երեք երկրների դեպքում առանձնապես չէր տարբերվում՝ առանցքը մշտապես կայուն անվտանգության ու ամուր պաշտպանական միջոցների ապահովումն էր:

### **Տնտեսական կապերի հաստատումը՝ որպես ԱՄՆ-ի հարավկովկասյան քաղաքականության բաղադրիչ**

Խորհրդային Միության փլուզման հետևանքով միջազգային հարաբերությունների համակարգում ծագած խնդիրներն ու մեկնարկած գործընթացները բազմաշերտ էին և բազմաբնույթ՝ ներառելով տարբեր ոլորտներ ու շրջանակներ: Նորանկախ պետություններից հսկայական ջանքեր էին պահանջվում հատկապես տնտեսական ինստիտուցիոնալ ճգնաժամերին դիմակայելու համար, քանի որ դրանք ուղեկցվում էին արդյունաբերությունների անկամբ և շուկայական կանոնակարգված համակարգերի բացակայությամբ պայմանավորված մաշտաբային խնդիրներով: Հարավային Կովկասի երկրները ևս բացառություն չէին. Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը, տարածաշրջանային կոնֆլիկտների և քաղաքական անորոշության պայմաններում, պետք է հստակ քայլեր ձեռնարկեին տնտեսությունների վերականգման, համագործակցային կապերի հաստատման և համապատասխան գործիքակազմերի ներդրման ուղղություններով: Եթե անվտանգության սպառնալիքների հաղթահարմանն ուղղված գործընթացները մեկնարկել էին դեռևս ԻՍԱՀՄ փլուզումից առաջ, ապա հետխորհրդային

ժամանակաշրջանում տնտեսական մարտահրավերների լուծման ճանապարհները դեռևս անորոշ էին: Այս համատեքստում պաշտոնական Վաշինգտոնը կենտրոնացավ տարածաշրջանում տնտեսությունների վերականգնման ու զարգացման վրա՝ այն դիտարկելով որպես կայունության և անվտանգության պահպանման կարևոր տարր: ԱՄՆ-ն Հարավային Կովկասում աջակցում էր շուկայական տնտեսությունների ձևավորմանը՝ նպատակ ունենալով խթանել ազատ առևտուրն ու ներդրումների աճը: Սա ուղղակիորեն օգնելու էր հարավկովկասյան երկրներին զերծ մնալ տնտեսական խոցելիությունից և գործել միջազգային պահանջներին ու չափորոշիչներին համապատասխան: Ուստի, հետխորհրդային ժամանակաշրջանում ԱՄՆ-ն և հարավկովկասյան երկրները լծվեցին առևտրատնտեսական կապերի հաստատման ու զարգացման համար իրավական հիմքերի և ինստիտուցիոնալ մեխանիզմների ներդրմանը:

Հայաստանի պարագայում այս մոտեցումն արձագանք գտավ 1992 թվականին ստորագրված մի շարք առանցքային համաձայնագրերով, որոնք դարձան ԱՄՆ-ի հետ տնտեսական հարաբերությունների հիմնասյուներ: Դրանցից առաջինը՝ «Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև առևտրային հարաբերությունների մասին» համաձայնագիրն էր (1992 թ., ապրիլի 2), որը սահմանում էր ոչ խտրական ռեժիմի սկզբունքներ՝ ուղղված ապրանքների և ծառայությունների փոխանակման դյուրինացմանը, առևտրի ծավալների ավելացմանն ու շուկայական տնտեսության ինստիտուցիոնալացմանը (World Intellectual Property Organization, n.d.): 1992 թվականի սեպտեմբերի 23-ին Հայաստանն ու ԱՄՆ-ն ստորագրեցին «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև ներդրումների փոխադարձ խրախուսման և պաշտպանության մասին» համաձայնագիրը, որը չնայած ուժի մեջ մտավ համեմատաբար ավելի ուշ՝ 1996 թվականի մարտի 29-ին, այնուամենայնիվ, մեծ դեր ունեցավ տնտեսական երկկողմ հարաբերությունների զարգացման գործընթացում՝ միտված լինելով կապիտալ ներդրումների խրախուսմանը, փոխադարձ պաշտպանությանն ու կողմերի աշխատավորության բարեկեցությանը: Առավել շատ հայտնի լինելով որպես «Ներդրումների երկկողմ պայմանագիր» (Bilateral Investment Treaty, BIT)՝ փաստաթուղթը սահմանում է նաև դրույթներ ներդրումային վեճերի լուծման համար (U.S. Department of State n.d.): Վերոնշյալ փաստաթղթերը տեսականորեն երաշխավորում էին բավարար հիմքեր կողմերի միջև տնտեսական համագործակցության հետագա ընդլայնման ու խորացման համար, ուստի պատահական չէր, որ պաշտոնական Վաշինգտոնը նույն ճանապարհով ընթացավ նաև Վրաստանի և Ադրբեջանի դեպքում:

1992 թվականի հունիսի 27-ին Թբիլիսում Վրաստանի և ԱՄՆ-ի միջև ստորագրվեց տնտեսական համագործակցության շրջանում առաջին կարևոր փաստաթուղթը՝

«Ներդրումների խթանման մասին» պայմանագիրը, որով երկու երկրների կառավարությունները հաստատում էին իրենց ընդհանուր նպատակը աջակցելու Վրաստանում տնտեսական գործընթացներին: Փաստաթուղթը սահմանում էր մի շարք դրույթներ արտասահմանյան ներդրողների, վարկերի տրամադրման, վեճերի լուծման, օրենսդրական կարգավորումների և առևտրատնտեսական համագործակցությանն առնչվող մի շարք այլ կետերի վերաբերյալ (U.S. International Development Finance Organization, n.d.): Չնայած սույն փաստաթուղթն ուներ բավականին լայն ընդգրկում, այնուամենայնիվ, Վրաստան-ԱՄՆ առևտրատնտեսական համագործակցության մեջ անկյունաքարային է «Ներդրումների երկկողմ պայմանագրի» (BIT) դերը: Վրաստանը Հարավային Կովկասի երկրորդ պետությունն էր, որը 1994 թվականին ԱՄՆ-ի հետ ստորագրեց նշյալ փաստաթուղթը (U.S. Department of State, n.d.): Փաստաթուղթը ձևավորված էր այն տեսակետի հիման վրա, ըստ որի «բաց ներդրումային քաղաքականությունն է, որ նպաստում է տնտեսական աճին», ուստի զարմանալի չէր որ պայմանագրի առաջնային նպատակն էր աջակցել Վրաստանի տնտեսության զարգացմանը՝ ստեղծելով առավել բարենպաստ պայմաններ մասնավոր ներդրումների համար՝ այդպիսով խթանելով նաև Վրաստանում գործունեություն ծավալող ոչ պետական կառույցների ու մարմինների առաջխաղացմանը: Այնուամենայնիվ, կարևոր է ընդգծել, որ սա չէր ենթադրում, որ անպայմանորեն պետք է տեղի ունենար ամերիկյան մասնավոր ներդրումների հոսքերի աճ (U.S. Department of State, n.d.): Եթե փորձենք, ուսումնասիրելով փաստաթղթի բոլոր դրույթները, ամբողջացնել վերջինիս հիմնական առաքելությունը, ապա կարելի է տարանջատել երեք առաջնային կետեր՝

- արտասահմանյան ներդրումների պաշտպանություն,
- շուկայական տնտեսությունների ազգային քաղաքականությունների խրախուսում և աջակցում,
- միջազգային չափանիշների ու ստանդարտների համապատասխանեցում:

Մասնավորապես, դիտարկելով փաստաթուղթը Վրաստանի շահերի ու հետաքրքրությունների տեսանկյունից, անշուշտ պետք է ընդգծել վերջինիս կարևորությունը հատկապես շուկայական տնտեսությունների ձևավորմանն ուղղված ազգային քաղաքականությունների մշակման և դրանք միջազգային ընդունված ձևաչափերին ու ստանդարտներին մոտարկման դիտանկյունից, որտեղ խնդիրներն ու հարցերը առավել հեշտ լուծելի կարող էին դառնալ պաշտոնական Վաշինգտոնի անմիջական աջակցության ներքո:

1993 թվականի ապրիլին 12-ին ստորագրվեց «Միացյալ Նահանգների և Ադրբեջանի Հանրապետության միջև առևտրային հարաբերությունների մասին» համաձայնագիրը, որի նպատակն էր խթանել երկու կառավարությունների միջև տնտեսական

համագործակցությանը, մաքսային և առևտրային հարցերի դյուրինացմանը, վեճերի լուծման մեխանիզմների ներդրմանը, բիզնեսի և առևտրային գործընթացների համար հստակ, կանխատեսելի և համարժեք կանոնների մշակմանը (U.S. Department of State, n.d): Մույն համաձայնագիրն առաջին քայլն էր կողմերի միջև տնտեսական ոլորտում համագործակցության մեկնարկի համար: Իսկ արդեն 1997 թվականին կողմերի միջև ստորագրվեց «Ներդրումների երկկողմ պայմանագիրը» (BIT), որն ուժի մեջ մտավ 2001 թվականի օգոստոսի 2-ին (U.S. Department of State, n.d.): Ադրբեջանը Հարավային Կովկասի վերջին պետությունն էր, որի հետ ԱՄՆ-ն ստորագրեց նշյալ փաստաթուղթը՝ ամրապնդելով ներդրումային համագործակցության միասնական մոտեցումը: Այն իր բովանդակությամբ համահունչ էր նախկինում ԱՄՆ-ի կառավարության՝ Հայաստանի և Վրաստանի կառավարությունների հետ ստորագրված նույնանուն փաստաթղթին և ներառում էր մանրամասն դրույթներ կապված ներդրողի՝ միջազգային արբիտրաժի միջոցով հյուրընկալող կառավարության հետ վեճերը լուծելու ընտրության ազատության, օտարերկրյա ներդրողների նկատմամբ արդարացի և բարենպաստ վերաբերմունքի, ներդրումների հետ կապված անվճար փոխանցումների, փոխհատուցումների հաշվարկման և մի շարք այլ կարևոր, հստակ կարգավորումներ ենթադրող գործընթացների վերաբերյալ (U.S. Department of State, n.d.):

Այսպիսով, Խորհրդային Միության փլուզումից հետո Հարավային Կովկասի երկրների համար տնտեսության ինստիտուցիոնալ վերականգնումը դարձավ կենսական նշանակության գործընթաց, որի համատեքստում ԱՄՆ-ի նման միջազգային խոշոր խաղացողի ներգրավվածությունն ու աջակցությունն ստացան բացառիկ կարևորություն: Այս համատեքստում վերոթվարկված փաստաթղթերը՝ առևտրային և ներդրումային համաձայնագրերը, հանդես եկան որպես ԱՄՆ-ի տարածաշրջանային տնտեսական քաղաքականության հիմնական գործիքներ՝ ձևավորելով համագործակցության ինստիտուցիոնալ հիմքը և արտահայտելով կողմերի առաջնահերթությունները: Դրանց շնորհիվ հետխորհրդային շրջանը նշանավորվեց ԱՄՆ-Հարավային Կովկաս տնտեսական երկխոսության ամրապնդմամբ՝ հաստատելով երկարաժամկետ և կայուն փոխգործակցության հեռանկարը:

### **ԱՄՆ-ի դերը Հարավային Կովկասում նորանկախ երկրների կայացման գործընթացում**

Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանին, Վրաստանին և Ադրբեջանին Միացյալ Նահանգների կողմից տրամադրված աջակցությունը պետք է դիտարկել ոչ միայն երկկողմ հարաբերությունների, այլ նաև ԱՄՆ-ի տարածաշրջանային քաղաքականության համատեքստում: Միացյալ Նահանգները, հանդես գալով որպես

ժողովրդավարական արժեքների տարածման և նորանկախ պետությունների կայացմանն աջակցող դերակատար, իր օգնությունն ուղղել է թե՛ մարդասիրական, թե՛ ինստիտուցիոնալ բնագավառներում՝ արձագանքելով ԽՍՀՄ փլուզմամբ պայմանավորված մարտահրավերներին:

Միացյալ Նահանգների ներգրավվածությունը Հարավային Կովկասում 1990-ականների սկզբից ձևավորվեց որպես ռազմավարական արձագանք այն քաղաքական և հումանիտար խնդիրներին, որոնց բախվում էին նորանկախ Հայաստանը, Վրաստանն ու Ադրբեջանը: ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության շրջանակներում տարածաշրջանի երկրների աջակցությունը ձևավորվում էր մի քանի առանցքային ուղղությամբ՝ պետական ինստիտուտների կայացում, ժողովրդավարական արժեքների տարածում և, իհարկե, շուկանների ազատականացում: Անշուշտ, Հարավային Կովկասը միակ տարածաշրջանը չէր, որտեղ աջակցության տրամադրման գործընթացում ԱՄՆ-ն որդեգրել էր վերոնշյալ սկզբունքներն ու մոտցումները: Այս մասին է վկայում 1992 թվականին ԱՄՆ կոնգրեսի կողմից ընդունված «Ազատության Աջակցության Ակտ» օրենքը: Բազմաբովանդակ այս փաստաթուղթը ԱՄՆ-ի կառավարությանը թույլ էր տալիս աջակցել նորանկախ երկրներին ժողովրդավարության հաստատման, շուկայական տնտեսությունների ձևավորման, անվտանգային սպառնալիքների նվազեցման և մի շարք այլ առանքային կարևորության հարցերի լուծմանն ուղղված գործընթացներում (Congress.gov, n.d.): Մակայն, այս փաստաթուղթը ոչ միայն աջակցության տրամադրման, այլ նաև աջակցության տրամադրման արգելքի մասին էր. կետ, որն ուղղակիորեն կապված էր Ադրբեջանի նորանկախ Հանրապետության հետ: «Ազատության Աջակցության Ակտ»-ում, համաձայն սենատոր Ջոն Բերրիի հեղինակած 907 բանաձևի, ներառվեց հետևյալ բովանդակությունն ունեցող հատվածը՝ «Արգելում է ԱՄՆ-ի օգնությունը սույն ակտով (բացի վերնագիր V) կամ որևէ այլ ակտով Ադրբեջանի կառավարությանը, քանի դեռ նախագահը չի զեկուցել Կոնգրեսին, որ Ադրբեջանի կառավարությունը քայլեր է ձեռնարկում դադարեցնելու Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի դեմ բոլոր շրջափակումները և ուժի կիրառումը.» (Congress.gov, n.d.): Փաստացիորեն, ԱՄՆ-ի կառավարությանն արգելվեց Ադրբեջանին որևէ աջակցություն տրամադրել, քանի դեռ վերջինս քայլեր չէր ձեռնարկել Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի դեմ ուժի կիրառման դադարեցման և ապաշրջափակման ուղղությամբ, և ինչպես իր խոսքում նշել է ԱՄՆ-ում Ադրբեջանի առաջին դեսպան Հաֆիզ Փաշաևը «սա առաջին խոչընդոտն էր ԱՄՆ-Ադրբեջան երկկողմ հարաբերությունների ճանապարհին» (Baban & Shiriyev, 2010, p. 95): Հարավային Կովկասի երկրներից Ադրբեջանը դարձավ միակ պետությունը, որը դուրս մնաց աջակցության այս հսկայածավալ ծրագրից, ինչն անշուշտ կենսական նշանակություն կարող էր ունենալ պետականաշինության ճանապարհը մեկնարկած յուրաքանչյուր նորահռչակ երկրի

համար: Այնուամենայնիվ, հետագայում թե՛ Ադրբեջանը, թե՛ ԱՄՆ-ն համատեղ ջանքեր գործադրեցին հատկապես էներգետիկ համագործակցության ձևավորման և ընդլայնման համար: Այդ քայլերն ամրապնդեցին Միացյալ Նահանգների՝ որպես ազդեցիկ ռազմավարական գործընկեր հանդես գալու դիրքերը:

Հարավային Կովկասում ԱՄՆ-ի օգնության ռազմավարական տարրերը ներառում էին նաև մասնավոր սեկտորի և քաղաքացիական հասարակության դերակատարության բարձրացմանը միտված ծրագրեր, որոնք նպատակ ունեին ամրապնդել ներքին կայունությունն ու նվազեցնել անցումային շրջանի սոցիալական ռիսկերը: Այստեղ արդարացիորեն անհրաժեշտություն է առաջանում հիշատակել ԱՄՆ-ի Իսաղաղության Կորպուսի ծրագրի մասին, որն իր կարևոր դերն է ունեցել հատկապես Հայաստանի և Վրաստանի համար՝ օգնելով նորանկախ երկրներին զարգացնել քաղաքացիական հասարակության հմտություններն ու կարողությունները՝ խթանելով ժողովրդավարական արժեքների ամրապնդմանն ու տարածմանը (Peace Corps, n.d.): Իսաղաղության կորպուսի պաշտոնական տվյալների համաձայն՝ առաջին կամավորները Հայաստան են ժամանել 1992 թվականի ձմռանը: Այդ ժամանակներից ի վեր վերջիններիս նպատակն է հանդիսացել նպաստել խաղաղության և բարեկամության հաստատմանը Հայաստանում՝ աջակցելով երիտասարդության զարգացմանը, կրթության, շրջակա միջավայրի, համայնքների տնտեսության և առողջապահական ոլորտների բարելավմանը՝ կրթման, վերակրթման, նոր հմտությունների ու կարողությունների տրամադրման միջոցով (Peace Corps, n.d.): Հետխորհրդային ժամանակաշրջանում Իսաղաղության Կորպուսի ծրագրերի իրագործման հիմքում մի խումբ գաղափարական անձանց նվիրումը, հավատն ու պատրաստակամությունն էր, ինչն անշուշտ կարևոր էր նորանկախ երկրում փոքր քայլերով արմատական ռեֆորմներ մեկնարկելու ճանապարհին: Վրաստանի դեպքում Իսաղաղության Կորպուսի ծրագրերը մեկնարկել են համեմատաբար ավելի ուշ (Վրաստանը ծրագրի առնչությամբ հետաքրքրություն է դրսևորել դեռևս 1994 թվականից, իսկ հիմնական գործընթացները մեկնարկել են 2000 թվականից)՝ հիմնականում կենտրոնանալով կրթական ոլորտի բարեփոխումների վրա (Peace Corps, n. d.): Իսկ ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա այն Իսաղաղության Կորպուսի ծրագրի մաս չի կազմել, սա պայմանավորված էր ինչպես քաղաքական, այնպես էլ անվտանգային խնդիրներով: Իսաղաղության Կորպուսը, որպես քաղաքացիական կամավորական ծրագիր, գործարկվում էր միայն այն երկրներում, որտեղ ԱՄՆ կառավարությունը կարող է ապահովել իր կամավորների անվտանգությունն ու գործունեության անաչառությունը, իսկ Ադրբեջանում 1990-ականների սկզբին և հատկապես Լեռնային Ղարաբաղի հակամարտության համատեքստում ձևավորված բարդ քաղաքական միջավայրը, ինչպես

նաև 907-րդ բանաձևով ԱՄՆ-ի օժանդակության արգելքը, գործնականում անհնար էին դարձնում ծրագրի իրականացումը:

Ամփոփելով, կասելի է ասել, որ ԱՄՆ-ի ներգրավվածությունը Հարավային Կովկասում նորանկախ երկրների կայացման և ժողովրդավարության ամրապնդման գործընթացում ուրվագծվեց որպես համադրություն ռազմավարական շահերի, արժեքային առաջնահերթությունների ու արձագանքի՝ տարածաշրջանի երկրների առջև ծառայած ներքին և արտաքին մարտահրավերներին: Թեև աջակցությունը տարբեր մակարդակներով և բնույթով է իրականացվել երեք երկրների նկատմամբ, դրա հիմքում ընկած էր ընդհանուր նպատակ՝ նպաստել կայուն, ազատ ու ինստիտուցիոնալ կառավարման համակարգերով պետությունների ձևավորմանն ու զարգացմանը: ԱՄՆ-ի գործողություններն այս փուլում նաև նախադեպ ստեղծեցին հետագա բազմաբնույթ համագործակցության համար՝ հետագայում տեղակայելով Հարավային Կովկասը ԱՄՆ-ի արտաքին քաղաքական օրակարգում որպես երկարաժամկետ հետաքրքրություն ներկայացնող տարածաշրջան:

## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Ամփոփելով Հարավային Կովկասում ԱՄՆ-ի՝ 1991-2000 թթ. քաղաքականության արդյունքները՝ կարելի է եզրակացնել, որ

1. Խորհրդային Միության փլուզումից հետո առաջացած անվտանգային, տնտեսական, քաղաքական և հումանիտար խնդիրները պայմանավորեցին ԱՄՆ-ի ներգրավվածությունը նախկին ԽՍՀՄ տարածքում, այդ թվում՝ Հարավային Կովկասում: Տարածաշրջանի նորանկախ պետությունների հետ համագործակցության հիմքում Վաշինգտոնը դրեց ժողովրդավարական բարեփոխումների խթանմանը, անվտանգային սպառնալիքների նվազեցմանը, տնտեսության վերականգնմանն ու ինստիտուցիոնալ կայացմանը համահունչ նպատակներ՝ առանց էական տարբերակումների:

2. ԱՄՆ-ի և Հարավային Կովկասի երկրների միջև առևտրի և ներդրումների համաձայնագրերը ձևավորեցին իրավապայմանագրային շրջանակ՝ շուկայական տնտեսության ձևավորմանն ու փոխվստահության վրա հիմնված համագործակցության համար: Ներդրումային միջավայրի կայացումը, ենթակառուցվածքների զարգացումը և մասնավոր հատվածի խթանումը դիտարկվում էին որպես կայունության և բարօրության ամրապնդման գործիքներ:

3. Անվտանգության ոլորտում ԱՄՆ-ի քաղաքականությունն ուներ համապարփակ և համաչափ բնույթ՝ ներառելով պաշտպանական կարողությունների զարգացման, ռազմավարական պլանավորման և տարածաշրջանային կայունության ապահովման տարրեր: Ինչպես տնտեսական, այնպես էլ անվտանգային ոլորտներում, Վաշինգտոնը

հանդես եկավ հավասարակշռված մոտեցմամբ՝ փորձելով աջակցել Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի համընթաց առաջխաղացմանը:

4. Հումանիտար աջակցությունն ու ժողովրդավարության ամրապնդմանն ուղղված ծրագրերը ևս կարևոր բաղադրիչ էին՝ միտված ինստիտուցիոնալ կառավարման կարողությունների ընդլայնման ու մարդկային կապիտալի զարգացմանը:

Այսպիսով, ԱՄՆ-ն Հարավային Կովկասի երեք երկրների հետ հարաբերություններում որդեգրեց համանման սկզբունքների վրա հիմնված համագործակցային մոդել, որը համադրեց կողմերի առաջնային կարիքներն ու շահերը: Տարածաշրջանային հավասարակշռված մոտեցումը, համաչափ աջակցությունը տարբեր ոլորտներում և հստակ ձևակերպված նպատակները հնարավորություն տվեցին ձևավորել այնպիսի քաղաքական օրակարգ, որը ոչ միայն արձագանքում էր ժամանակի հրատապ պահանջներին, այլև վկայում էր ԱՄՆ-Հարավային Կովկաս հարաբերությունների խոստումնալից և երկարաժամկետ հեռանկարի մասին:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՀՀ Ազգային ժողով. «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջեւ Հայաստանի Հանրապետությունում Միացյալ Նահանգների խաղաղության կորպուսի ծրագրի մասին» համաձայնագիր, ՀՀ Ազգային ժողով. <http://www.parliament.am/library.php?page=document&DocID=740&lang=arm>.

**Baban, I. & Shiriyev, Z.** (2010). *"THE U.S. SOUTH CAUCASUS STRATEGY AND AZERBAIJAN"*. Transatlantic Policy Quarterly, <http://turkishpolicy.com/files/articlepdf/the-u-s-south-caucasus-strategy-and-azerbaijan-summer-2010-en.pdf>.

**Cameron, F.** (2005, August 25). *"US Foreign Policy after the Cold War" Global Hegemon or Reluctant Sheriff?* Routledge.

**Centre for Arms Control and Non-Proliferation.** (2022). *"The Nunn-Lugar Cooperative Threat Reduction Program"*. Centre for Arms Control and Non-Proliferation <https://armscontrolcenter.org/fact-sheet-the-nunn-lugar-cooperative-threat-reduction-program-2/>.

**Congress.gov.** (1991-1992). *FREEDOM Support Act.* Congress.gov. <https://www.congress.gov/bill/102nd-congress/house-bill/4547> .

**Gafarlı, O., Anapiosyan, A., Chapichadze, K., & Öztarsu, F. M.** (2016) *"The Role of Global and Regional Actors in the South Caucasus"*, Caucasus Edition – Journal of

- Conflict Transformation. <https://caucasusedition.net/wp-content/uploads/2016/06/Actors-ENG.pdf>.
- Garashova, S.** (2024, January). *"UNITED STATES –AZERBAIJAN RELATIONS (1991-2020)"*. Eminak Scientific Quarterly Journal. <https://www.eminak.net.ua/index.php/eminak/article/view/688>.
- Nichol, J. & Kim, J.** (2001, December 3). *"Armenia, Azerbaijan, and Georgia: Political Developments and Implications for U.S. Interests"*. CRS Issue Brief for Congress. The Library of Congress. <https://digital.library.unt.edu/ark:/67531/metaocrs1727/m1/16/>.
- Nixey, J.** (2010, April). *"The South Caucasus: Drama on Three Stages"*. [https://www.researchgate.net/publication/228017735\\_The\\_South\\_Caucasus\\_Drama\\_on\\_Three\\_Stages](https://www.researchgate.net/publication/228017735_The_South_Caucasus_Drama_on_Three_Stages).
- North Atlantic Treaty Organization.** *NATO Science for Peace and Security (SPS) Programme*. North Atlantic Treaty Organization. <https://www.nato.int/science/country-fliers/Armenia.pdf>.
- North Atlantic Treaty Organization.** *Planning and Review Process*. [https://www.nato.int/cps/em/natohq/topics\\_68277.htm](https://www.nato.int/cps/em/natohq/topics_68277.htm).
- North Atlantic Treaty Organization.** *Relations with Azerbaijan*. North Atlantic Treaty Organization. [https://www.nato.int/cps/en/natohq/topics\\_49111.htm](https://www.nato.int/cps/en/natohq/topics_49111.htm).
- North Atlantic Treaty Organization.** *Science for Peace and Security Programme, Georgia*. North Atlantic Treaty Organization. <https://www.nato.int/science/country-fliers/Georgia.pdf>.
- NTI.org.** *Treaty between the United States of America and the Union of Soviet Socialist Republics*
- Office of the Secretary of Defense.** (1992). *"Investment Incentive Agreement between the Government of the United States of America and the Government of the Republic of Georgia"*. Office of the Secretary of Defense. [https://www.dfc.gov/sites/default/files/countries/agreements/BL\\_Georgia-06-27-1992.pdf](https://www.dfc.gov/sites/default/files/countries/agreements/BL_Georgia-06-27-1992.pdf).
- Office of the Secretary of Defense.** (1993, January 1). *"National Security Strategy of the United States"*. Office of the Secretary of Defense. <https://history.defense.gov/Historical-Sources/National-Security-Strategy/>.  
on *Strategic Offensive Reductions (START II)*. NTI.org.
- Peace Corps.** *About Peace Corps in Georgia*. Peace Corps. <https://www.peacecorps.gov/georgia/>.
- Peace Corps.** *History of the Peace Corps in Armenia*. Peace Corps. <https://www.peacecorps.gov/armenia/about/>.

- Powaski, R. E.** (2019). *"Ideals, Interests, and U.S. Foreign Policy from George H. W. Bush to Report*. USAID. [https://pdf.usaid.gov/pdf\\_docs/PDACG167.pdf](https://pdf.usaid.gov/pdf_docs/PDACG167.pdf).
- U.S. Agency for International Development.** *USAID Georgia*. U.S. Agency for International Development. <https://2017-2020.usaid.gov/georgia>.
- U.S. Department of State.** (1997). *Agreement Concerning Cooperation in the Area of Prevention of Proliferation of Weapons of Mass Destruction and the Promotion of Defense and Military Relations*. U.S. Department of State. <https://www.state.gov/97-1110>.
- U.S. Department of State.** (1997). *Treaty between the Government of the United States of America and the Government of the Republic of Georgia concerning the Encouragement and Reciprocal Protection of Investment*. U.S. Department of State. <https://www.state.gov/97-817>.
- U.S. Department of State.** (2002, November 5). *Agreement Concerning Cooperation in the Area of Counterproliferation of Weapons of Mass Destruction*. U.S. Department of State. <https://www.state.gov/02-1125>.
- U.S. Department of State.** (2003). *Azerbaijan (03-507) – Agreement Concerning Cooperation in the Area of Counterproliferation of Weapons of Mass Destruction and Defense Activities*. U.S. Department of State. <https://2021-2025.state.gov/03-507/>.
- U.S. Department of State.** *NATO Partnership for Peace, U.S. Department of State*. U.S. Department of State. [https://1997-2001.state.gov/regions/eur/nato\\_fs-pfp.html#:~:text=What%20Is%20PFP%3F,countries%20to%20enhance%20European%20security](https://1997-2001.state.gov/regions/eur/nato_fs-pfp.html#:~:text=What%20Is%20PFP%3F,countries%20to%20enhance%20European%20security).
- U.S. Department of State.** *Treaty between the Government of the United States of America and the Government of the Republic of Azerbaijan concerning the Encouragement and Reciprocal Protection of Investment*. U.S. Department of State. <https://www.state.gov/wp-content/uploads/2019/02/01-802-Azerbaijan-Trade-and-Investment-8.25.2000.pdf>.
- U.S. Department of State.** *United States Bilateral Investment Treaties*. U.S. Department of State. <https://www.state.gov/investment-affairs/bilateral-investment-treaties-and-related-agreements/united-states-bilateral-investment-treaties/>.
- U.S. International Development Finance Cooperation.** (1992). *Investment Incentive Agreement*. USAID. [https://pdf.usaid.gov/pdf\\_docs/Pnacm580.pdf](https://pdf.usaid.gov/pdf_docs/Pnacm580.pdf).

- World Intellectual Property Organization.** (1992). *Agreement on Trade Relations between the United States of America and the Republic of Armenia*. World Intellectual Property Organization. <https://www.wipo.int/wipolex/en/treaties/details/595>.
- Zarifian, J.** (2021, July 8). "U.S. Foreign Policy in the 1990s and 2000s, and the Case of the South Caucasus (Armenia, Azerbaijan, Georgia)". European Association for American Studies. <https://journals.openedition.org/ejas/11135>.

## REFERENCE LIST

- HH Azgayin Zhoghov.** Hayastani Hanrapetutyán karavarutyán ev Amerikayi Miatsyal Nahangneri karavarutyán mijev Hayastani Hanrapetutyunum Miatsyal Nahangneri khaghaghutyán korpusi tsragri masin hamadzaynagir.  
(RA National Assembly, Agreement between the Government of the Republic of Armenia and the Government of the United States of America concerning the United States Peace Corps Program in the Republic of Armenia)  
<http://www.parliament.am/library.php?page=document&DocID=740&lang=arm>.
- Baban, I. & Shiriyev, Z.** (2010). "THE U.S. SOUTH CAUCASUS STRATEGY AND AZERBAIJAN". Transatlantic Policy Quarterly, <http://turkishpolicy.com/files/articlepdf/the-u-s-south-caucasus-strategy-and-azerbaijan-summer-2010-en.pdf>.
- Cameron, F.** (2005, August 25). "US Foreign Policy after the Cold War" Global Hegemon or Reluctant Sheriff? Routledge.
- Centre for Arms Control and Non-Proliferation.** (2022). "The Nunn-Lugar Cooperative Threat Reduction Program". Centre for Arms Control and Non-Proliferation <https://armscontrolcenter.org/fact-sheet-the-nunn-lugar-cooperative-threat-reduction-program-2/>.
- Congress.gov.** (1991-1992). FREEDOM Support Act. Congress.gov. <https://www.congress.gov/bill/102nd-congress/house-bill/4547>.
- Gafarlı, O., Anapiosyan, A., Chapichadze, K., & Öztarsu, F. M.** (2016) "The Role of Global and Regional Actors in the South Caucasus", Caucasus Edition – Journal of Conflict Transformation. <https://caucasusedition.net/wp-content/uploads/2016/06/Actors-ENG.pdf>.
- Garashova, S.** (2024, January). "UNITED STATES –AZERBAIJAN RELATIONS (1991-2020)". Eminak Scientific Quarterly Journal. <https://www.eminak.net.ua/index.php/eminak/article/view/688>.

- Nichol, J. & Kim, J.** (2001, December 3). "Armenia, Azerbaijan, and Georgia: Political Developments and Implications for U.S. Interests". CRS Issue Brief for Congress. The Library of Congress. <https://digital.library.unt.edu/ark:/67531/metacrs1727/m1/16/>.
- Nixey, J.** (2010, April). "The South Caucasus: Drama on Three Stages". [https://www.researchgate.net/publication/228017735\\_The\\_South\\_Caucasus\\_Drama\\_on\\_Three\\_Stages](https://www.researchgate.net/publication/228017735_The_South_Caucasus_Drama_on_Three_Stages).
- North Atlantic Treaty Organization.** NATO Science for Peace and Security (SPS) Programme. North Atlantic Treaty Organization. <https://www.nato.int/science/country-fliers/Armenia.pdf>.
- North Atlantic Treaty Organization.** Planning and Review Process. [https://www.nato.int/cps/em/natohq/topics\\_68277.htm](https://www.nato.int/cps/em/natohq/topics_68277.htm).
- North Atlantic Treaty Organization.** Relations with Azerbaijan. North Atlantic Treaty Organization. [https://www.nato.int/cps/en/natohq/topics\\_49111.htm](https://www.nato.int/cps/en/natohq/topics_49111.htm).
- North Atlantic Treaty Organization.** Science for Peace and Security Programme, Georgia. North Atlantic Treaty Organization. <https://www.nato.int/science/country-fliers/Georgia.pdf>.
- NTI.org.** Treaty between the United States of America and the Union of Soviet Socialist Republics.
- Office of the Secretary of Defense.** (1992). "Investment Incentive Agreement between the Government of the United States of America and the Government of the Republic of Georgia". Office of the Secretary of Defense. [https://www.dfc.gov/sites/default/files/countries/agreements/BL\\_Georgia-06-27-1992.pdf](https://www.dfc.gov/sites/default/files/countries/agreements/BL_Georgia-06-27-1992.pdf).
- Office of the Secretary of Defense.** (1993, January 1). "National Security Strategy of the United States". Office of the Secretary of Defense. <https://history.defense.gov/Historical-Sources/National-Security-Strategy/>.  
on Strategic Offensive Reductions (START II). NTI.org.
- Peace Corps.** About Peace Corps in Georgia. Peace Corps. <https://www.peacecorps.gov/georgia/>.
- Peace Corps.** History of the Peace Corps in Armenia. Peace Corps. <https://www.peacecorps.gov/armenia/about/>.
- Powaski, R. E.** (2019). "Ideals, Interests, and U.S. Foreign Policy from George H. W. Bush to Report. USAID. [https://pdf.usaid.gov/pdf\\_docs/PDACG167.pdf](https://pdf.usaid.gov/pdf_docs/PDACG167.pdf).  
Revolution". University of Pennsylvania Press.

- U.S. Agency for International Development.** USAID Georgia. U.S. Agency for International Development. <https://2017-2020.usaid.gov/georgia>.
- U.S. Department of State.** (1997). Agreement Concerning Cooperation in the Area of Prevention of Proliferation of Weapons of Mass Destruction and the Promotion of Defense and Military Relations. U.S. Department of State. <https://www.state.gov/97-1110>.
- U.S. Department of State.** (1997). Treaty between the Government of the United States of America and the Government of the Republic of Georgia concerning the Encouragement and Reciprocal Protection of Investment. U.S. Department of State. <https://www.state.gov/97-817>.
- U.S. Department of State.** (2002, November 5). Agreement Concerning Cooperation in the Area of Counterproliferation of Weapons of Mass Destruction. U.S. Department of State. <https://www.state.gov/02-1125>.
- U.S. Department of State.** (2003). Azerbaijan (03-507) – Agreement Concerning Cooperation in the Area of Counterproliferation of Weapons of Mass Destruction and Defense Activities. U.S. Department of State. <https://2021-2025.state.gov/03-507/>.
- U.S. Department of State.** NATO Partnership for Peace, U.S. Department of State. U.S. Department of State. [https://1997-2001.state.gov/regions/eur/nato\\_fs\\_pfp.html#:~:text=What%20Is%20PFP%3F,countries%20to%20enhance%20European%20security](https://1997-2001.state.gov/regions/eur/nato_fs_pfp.html#:~:text=What%20Is%20PFP%3F,countries%20to%20enhance%20European%20security).
- U.S. Department of State.** Treaty between the Government of the United States of America and the Government of the Republic of Azerbaijan concerning the Encouragement and Reciprocal Protection of Investment. U.S. Department of State. <https://www.state.gov/wp-content/uploads/2019/02/01-802-Azerbaijan-Trade-and-Investment-8.25.2000.pdf>.
- U.S. Department of State.** United States Bilateral Investment Treaties. U.S. Department of State. <https://www.state.gov/investment-affairs/bilateral-investment-treaties-and-related-agreements/united-states-bilateral-investment-treaties/>.
- U.S. International Development Finance Cooperation.** (1992). Investment Incentive Agreement.  
USAID. [https://pdf.usaid.gov/pdf\\_docs/Pnacm580.pdf](https://pdf.usaid.gov/pdf_docs/Pnacm580.pdf).
- World Intellectual Property Organization.** (1992). Agreement on Trade Relations between the United States of America and the Republic of Armenia. World Intellectual Property Organization. <https://www.wipo.int/wipolex/en/treaties/details/595>.

**Zarifian, J.** (2021, July 8). "U.S. Foreign Policy in the 1990s and 2000s, and the Case of the South Caucasus (Armenia, Azerbaijan, Georgia)". European Association for American Studies. <https://journals.openedition.org/ejas/11135>.

## **ABSTRACT**

### **THE MAIN DIRECTIONS OF U.S. REGIONAL POLICY IN THE SOUTH CAUCASUS (1991–2000)**

*ARMINE ALAVERDYAN*

With the collapse of the Soviet Union, the South Caucasus effectively entered the U.S. foreign policy agenda as a new subject with which the United States had no prior experience of engagement. There were no clear conceptions regarding the South Caucasian states, their systems of governance, ruling authorities, or political expectations. During the seventy years of the USSR's existence, the primary focus of official Washington had been Moscow, while the approaches and positions adopted toward the other Soviet republics and regions were directly shaped by the dynamics of U.S.-Soviet relations.

This article presents the main directions and targets of U.S. regional policy in the South Caucasus during the post-Soviet period, within the context of establishing and developing relations with the newly independent states of Armenia, Georgia, and Azerbaijan, and ensuring the foundation of legal and treaty-based frameworks. The research combines historical, comparative, and analytical methods, and includes content analysis of a number of documents, including bilateral agreements and treaties.

The aim of the study is to examine the full context of the factors that underpinned the establishment of relations between the United States and the three South Caucasian countries in the post-Soviet period, as well as the development of official Washington's regional policy in line with American foreign policy principles and approaches.

**Achievements:** In line with the foreign policy agenda shaped after the dissolution of the Soviet Union, official Washington adopted similar approaches and principles in building relations with the three South Caucasian countries. As with other newly independent regions and states, U.S. efforts in the South Caucasus primarily focused on strengthening security guarantees, promoting democratic values, and encouraging market economies. The cooperation model adopted by official Washington simultaneously addressed the fundamental challenges of the newly independent states and reflected the U.S. vision for long-term regional engagement—built on legal and treaty-based foundations, balanced approaches, and the cultivation of mutual trust.

**Keywords:** South Caucasus, regional policy, Armenia, Georgia, Azerbaijan, Soviet Union, newly independent states.

## РЕЗЮМЕ

### ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ РЕГИОНАЛЬНОЙ ПОЛИТИКИ США НА ЮЖНОМ КАВКАЗЕ (1991–2000)

*АРМИНЕ АЛАВЕРДЯН*

С распадом Советского Союза Южный Кавказ фактически вошел в повестку дня внешней политики США как новый субъект, с которым у Соединенных Штатов не было опыта работы. Не существовало четких представлений о государствах Южного Кавказа, о системах правления, действующей власти и политических ожиданиях. На протяжении 70 лет существования СССР главным объектом внимания официального Вашингтона была Москва, а подходы и позиции в отношении других советских республик и регионов напрямую определялись отношениями между Москвой и Вашингтоном.

В статье представлены основные направления и цели формирования региональной политики США на Южном Кавказе в постсоветский период в контексте обеспечения договорно-правовых основ, установления и развития отношений с новыми независимыми странами: Арменией, Грузией и Азербайджаном. В исследовании использовалось сочетание исторических, сравнительных и аналитических методов, а также был проведен контент анализ ряда документов, включая двусторонние соглашения и договоры.

Целью исследования является рассмотрение полного контекста факторов, лежащих в основе становления отношений между США и тремя странами Южного Кавказа в постсоветский период, а также формирования региональной политики официального Вашингтона в русле американских внешнеполитических подходов и позиций.

**Достижения;** Оставаясь верным внешнеполитической повестке, сформированной после распада Советского Союза, официальный Вашингтон принял схожие подходы и принципы в выстраивании отношений с тремя странами Южного Кавказа. Как и в случае с другими новыми независимыми регионами и странами, основные усилия США на Южном Кавказе были направлены на укрепление гарантий безопасности, распространение демократических ценностей и продвижение рыночной экономики. Принятая официальным Вашингтоном кооперативная модель одновременно отвечала фундаментальным проблемам новых независимых государств региона и отражала видение долгосрочного взаимодействия США,

построенного на правовых и договорных основах, пропорциональных подходах и формировании взаимного доверия.

**Ключевые слова:** Южный Кавказ, региональная политика, Армения, Грузия, Азербайджан, Советский Союз, новые независимые страны.

Հոդվածը ւրվագրվել է՝ 22.05. 2025

Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 25.05. 2025

Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 19.08.2025